



128. ԳԱՌՆԻԿ

Ըլում ա շի, ըլում մի քասիբ մարդ, դրան մի հատ տղա ա ըլում՝ անունը Գառնիկ: Էս քասիբ մարդը մահանալու օրը ասում ա.— Ա՛յ որդի, արի քեզ մի վասիաթ տամ. ես հորական գովլաթ չեմ ետ գցել, երեք խրատ ունեմ, էտ երեք խրատը կը տամ, կը պահես՝ դու դիդես, չես պահի՝ դու գիդես:

Ասըմ ա.— Ասա՛, ափու, կը պահեմ:

Ասըմ ա.— Ինչ տեղ որ կէթաս, ինչ գործի որ կըլնես, ժամը որ կըտա՝ էն գործը վեկքցես, կէթաս ժամ:— Ասում ա,— էս մեկ: Մին էլ.— ասում ա,— որ կէթաս ջրի կպատահես, ինչքան էլ բարակ ջուր ըլի՝ առանց վալադ շանցկենաս: էս էլ էրկու: Մին էլ, որդի, որ կէթաս՝ կըտեսնես, մի վերստ ա մնում, որ հասնես տուն, մութն ընկավ, քնի ընտեղ, լիսանա՝ առավոտը արի: էս իրեք խրատը տալիս եմ, կըպահես՝ դու գիտես, չես պահի՝ պարտական մնաս:

Ասըմ ա ու հերը մեռնում ա: Տանըմ են թաղըմ են: Մի վախտ էտ տղեն նոքարությունով էրկու հարիր մանեթ փող ա աշխատում: Տենըմ ա, որ էփեճա փող կա ձեռը՝ ասում ա. «էս լավ ա, էլ նոքարություն չեմ անի, ինձ համա առուտուր կանեմ»: Տենըմ ա իրանց երկրացի մի քանի դուքանչի էթըմ են ապրանք բերելու, Գառնիկը ասըմ ա.— Ինձ էլ ընկեր անե՞ք, ես էլ հետներդ գամ:

Ասըմ են.— Խի՞ չենք տանի, արի էթանք:

էթըմ են մի օր, էրկու օր, հասնըմ են մի ուրիշ քաղկի. ամեն-
քը մի դեհի վրա էթըմ են իրանց հմա առուտուր անելու. իրար
կորցնըմ են: Գառնիկը իրա երկու հարիր մանեթին ապրանք ա
առնըմ, պրծնըմ: էթըմ ա ղաթրնեռ ա բռնըմ, բերըմ և
ապրանքը բարձըմ ա ու գալիս ա դըբա հայրենիք: Գալիս ա մի
օր ինչուր իրիկուն, մութը տալիս ա, ճամփին բեռները վեր են
գնըմ, որ լիսանա՝ էթան: Մեկ էլ տեսնըմ են՝ զըրը՛նգ հա զըրը՛նդ.
մի մեծ քարվան էկավ: Մի հարուստ բազրկան էկավ տեհավ Գառ-
նիկը ըտեղ նստած: Հրամայեց՝ իրա խալֆա ղաթրնեռի բեռները
վեղրեցին, որ առավոտը իրար հետ էթան: Բազրկանն էկավ Գառ-
նիկի կուշտը, ասեց.— Ա՛յ տղա, ի՞նչ մարդ ես:

Թ.հ.— Պուճուր առուտուրական եմ:

— Հնր, մեր շո՞ւնես:

Թ.հ.— Զատ շունեմ:

— Ինձ էլ տղա շունեմ, կըլե՞ս ինձ տղա:

— Թե քեզ պես մարդը ինձ տղա վերունի, ես խի՞ չպտի ըլեմ
տղա քեզ:

— Դե որ ըտենց ա, բեր ապրանքներս խառնենք իրար ու
քշենք:

Առավոտը լիսը բացվի ձեր վրեն, բացվում ա ըտոնց վրեն,
բեռները բարձում են ու քշում: Շատ են էթըմ թե քիչ, աստված
գիտա, հասնըմ են մի գեղի: Ասըմ են.— Գառնի՛կ, տեսնը՛մ ես էն
բարձր տները:

Ասըմ ա.— Տեսնըմ եմ, ափո՛ւ:

— էն բարձր տները մերն ա, կէթաս դուռը կը ծեծես. մերդ
դուս կգա, կասես. «Դուքանը կը սրբեք, որ ապրանք բերենք. տե-
ղավորենք»:

Գառնիկը էթըմ ա, էտ դուռը ծեծըմ ա, մերը դուս ա գալի,
ասըմ ա. «Ազի՛, դուքանի դուռը բաց արա, որ ապրանք բերենք,
տեղավորենք»:

Մերը տեսնըմ ա՝ ի՛նչ տղա, ասըմ ա.— Ծրանի էն մորո՞, որ
տենց տղա ունի, աշխարքի տակը ըտենց սիրուն տղա չկա:

Դուռը բաց ա անըմ, ապրանքի տեղը սրբում են, բազրկանը
գալիս ա, ապրանքը բերում ա, սկսում են առուտուր անելը: Առու-
տուրը հինգ անգամ շատանըմ ա՝ համ տղի խելոքությունից. համ
սիրունությունից: Ապրանքը, որ պրծնում ա, բազրկանն ասըմ ա.—
Գառնիկ ջա՛ն, դու առուտուր արա, որ ես էթամ ապրանքի:

Բազրկանը ճամփա ա ընկնում, էթում ա: Գառնիկը մնում ա
դուքանը:

Օրերից մին օրը բազրկանի կնգա միտկը փոխվում ա էտ տղի հետ: Ասըմ ա.— Դու իմ մերն ես, ես էտ թավուր բան քեզ հետ շատր ունենամ:

Ինչ իլլաճ ա անըմ տղին՝ դրա խոսկը չի կատարըմ: Բազրկանի կնկա հերսը որ բռնում ա, իրա մեջ մտածում ա, ասըմ ա. «Յավաշ բազրկանը գա՛ դրա գլուխը ինչ օյին կը հանեմ»:

Մի քանի օրից եղնը բազրկանը գալիս ա: Կնիկը շորերը ճղրտում ա, ու էթըմ ա բազրկանի աղաքը:

— Դու էլ չլե՛ս, քու բերած տղեն է՛լ: Ինձ անվայել բաներ ա ասըմ ու ինձանից գլուխ ա ուզըմ»:

Բազրկանն ասըմ ա.— Դե՛ սուս կաց, տես դրա գլուխը ի՛նչ կը հանեմ:

Ապրանքը դարսում են, պրծընըմ են, իրիկունը բազրկանը էթըմ ա իրան փոնչու կուշտը, ասըմ ա. «Փոնչի՛», ասըմ ա. «Համմե՛»:

Ասըմ ա.— Առավոտը քշերով կը գա՛ կըքցես փուռը, կը վառես:— Ասըմ ա, թողըմ ա գալի:

Առավոտը լիսը բացվըմ ա, բազրկանը Գառնիկին ասըմ ա.— Գնա՛ փոնչուն ասա. «Ասածս կատարել ե՞ս»:

Գառնիկը էթըմ ա՝ գուռը ծեծըմ: Դուռը ծեծըմ ա՝ փոնչին բաց չի անըմ, վեր ա ունում մի հատ քար, որ քարով տա՛ դուռը բաց անի, հենց քարը ձեռին՝ ժամը տալիս են:

Քարը վեր ա քըցմ ու էթըմ ա ժամը՝ իրա աղոթքն ա անըմ:

Բազրկանի կնիկն էլ ա ժամը ըլըմ, թեզ դուս ա գալի, գալիս ա փոնչու մոտ ասըմ ա.— Բազրկանի ասածը կատարել է՞ս:

Ասըմ ա.— Հա՛, արի ասեմ:— Քաշըմ ա բազրկանի կնկանը ճխտում ա փուռն ու վառում ա:

Քամակից Գառնիկն ա էթըմ, դուռը ծեծըմ ա՝ փոնչին դուս ա գալի: Ասըմ ա.— Բազրկանի ասածը կատարել ե՞ս:

Ասըմ ա.— Գնա բազրկանին ասա հա՛, կատարել եմ:

Գառնիկը գալիս ա տունը, ասըմ ա.— Ափո՛ւ, կատարել ա փոնչին:

Բազրկանը մնում ա մաթալ, ասըմ ա. «էս ինչ բան ա»: Էթըմ ա փոնչու կուշտը ասըմ ա.— Ո՛ւմ ես քցե, դրուստն ասա:

Քե.— Առավոտը կնիկդ էկավ՝ քցել եմ փուռը:

Բազրկանը սուս ու փուս ետ ա դառնըմ, գալի: Գալիս ա Գառնիկի կուշտը, ասըմ ա.— Գառնի՛կ, դու ըլես քու աստվածը, դուզն ասա՛ ի՞նչ ա պատահե ձեր մեջը:

Ասըմ ա.— Մեր մեջը էն ա պատահե, որ իմ մերը ինձ ասեց.—
«Գլուխդ մեկ արա ինձ հետ», ես չհամաձայնեցի:

Բազրկանն ասեց.— Որ ըտենց ա, Գառնի՛կ, արի բաժանվենք:
Քանի իմ կնիկը իմ միտը ընկնի քեզ կը վնասեմ: Լավ էն ա, դու
ինձանից հեռանաս:

Առավոտը լիսը բացվավ, բազրկանը բերեց ինչքան ապրանք
ունեի, էրկու ինքը վե կալավ, մին տվեց Գառնիկին:

Գառնիկը ղաթրները բռնեց, բարձեց իրա ապրանքը ու դուս
էկավ ըտիան: Գնաց դըբա իրա հայրենիքը: Ճամփին մի վարար
չուր պատահեց: Գառնիկն ասեց.— էթանք վալադ բերենք, վալա-
դով ջուրն անցկենանք:

Քրեհգարներից մինը ասեց.— Ի՛նչ վալադ, կանցկենանք,—
ու ղաթրը քշեց ջրի մեջը: Ջուրը վեկալավ, տարավ: Նոր Գառնիկը
գնաց մոտիկ գեղիցը վալադ բերեց, ջրի բարակ տեղովը անցկա-
ցավ. քշեցին, ճամփա ընկան, մի երեք օր դնացին՝ հասան իրանց
դեղի կուշտը: Մի վերստ էր մնում, որ հասնեն՝ մուլը տվեց, Գառ-
նիկը բեռները վե դրեց, պառկան քնելու:

Քրեհգարները քնեցին, Գառնիկը քշերը վեկացավ իրա բեռ-
ներին թամաշ անեի, մին էլ տեհավ, որ մի մարդ մի ֆանառ ձեռին,
մի բան հուսին դրած էկավ գերեզմանների կուշտը, մի քար բարձ-
րացրեց, էտ հուսի բանը դրեց էտ քարի տակը, քարը թոլ արեց
վրեն, ֆանառը փչեց ու գնաց: Գառնիկը որ տեհավ քամակիցը
գնաց, քարը թոլ արեց, էտ քարի տակի բանը դրեց հուսին՝ բերեց:
Բերեց իրա չադրի մեջը, բաց արեց, տեհավ, ի՛նչ տենա, մի հատ
ախչիկ, որ շուտես, շամես՝ դրա էրեսին թամաշ անես, մի հատ
խանչալ սրտին, ընկած: Խանչալը հանեց. առավոտը լիսացավ, բեռ-
ները բարձեց, ասեց.— Ըսհետ, քրեհգարնե՛ր, ձեր քրեհը տամ,
էթանք մի ուրիշ քաղաք:

Վեկացան գնացին ուրիշ քաղաք: Ղասնելու բաշտան, ինչ
ունեի-չունեի ծախեց, շինեց նազդ փող, տվեց հեքիմի՝ ախչկանը
լավացնի:

Մի ամսվանը լավացավ, բայց լեզու շունեի, լեզուն բռնված
էր: Մի ամիս էլ մնաց, լեզուն բացվեց: էտ տղին ասեց.— Ինձ
որդո՞ւց ես բերե:

Նա էլ ասեց.— էն քարի տակից:— Ոնց որ տեհել էր՝ պատմեց
ախչկանը:

Ախչիկն ասեց.— Որ ըտենց ա, վե կաց էթանք մեր հայրե-
նիքը:

Յկան իրանց հայրենիքը, իրար առան:

Որերից մի օրը Գառնիկը տեհավ, որ փողերը պրծնում ա,
էլ ընդ՝ վատի ապրի, նոթերը կախ էկավ տունը:

Կնիկն ասեց.— Խի՞ ես նոթերդ կախ արել:

Ասեց.— Ա՛յ կնիկ, փողը պրծել ա, էլ ինչո՞վ պտի ապրենք,
ո՛չ առուտուր ունենք, ո՛չ աշխատանք:

Ասեց.— Իմ գլուխը սաղ ըլի քու հմա, մի՛ վախենա.— Ձեռը
տարավ ծոծրակը, մի անդին քար հանեց, ասեց.— էս անգին
քարը կը տանես քաղաքը, ոչ մի մարդ սրա գինը չի տա, վազիրի
տղից սավայի, որ կասի. «Ինչ տամ», ասա. «Գինը ինչ ա՛ էն տու»:
Որ ասի. «Իրեք հազար մանեթ տամ», դու ասա. «Ծրկու հազար
մանեթ տու»: Նա եքսի օրը քեզ կտանի ղոնաղ. որ կտանի ղոնաղ,
դու էլ իրան կը բերես ղոնաղ: Դե՛ տար ծախա:

Գառնիկը առավ անգին քարը, տարավ քաղաք՝ ծախի: Որդի
պրտըտեց, մինն էլա գին տվող չէլավ: Ասեցին, որ սրա գինը վա-
զիրի տղեն կը աա: Մի քիչ մնաց՝ վազիրի տղեն էկավ, ասեց.—
Սրա գինն ի՞նչ ա:

Ասեց.— Ինչ աժի՛ տուր:

Ասեց.— Սրա գինը իրեք հազար մանեթ ա:

Ասեց.— Դու էրկու հազար տու:

էրկու հազար մանեթ հանեց, տվեց: Տարավ տուն անգին
քարը, հորն ասեց.— Ափո՛ւ, մի անգին քար եմ առել, էրկու հա-
զար մանեթի, մի հազարը ինձ բաշխել ա:

Ասեց.— Բա խի՞ չիր բերըմ ղոնաղ:

Ասեց.— Ամեն օր ընդեղ ա էն տղեն, ուզենամ առավոտը
կրերեմ:

Գառնիկը վողն առավ, գնաց տուն: Ամեն եղելությունը
կնդանն ասեց:

Կնիկն ասեց.— Առավոտը գնաց էլի ընդեղ, որ քեզ տանի ղո-
նաղ, որ դու էլ ընտրան բերես անպատճառ:

Գառնիկն առավոտը գնաց քաղաքը, տեհավ վազիրի տղան
իրան ա ման գալի: Ասեց.— Համեցե՛ք, էթանք մեր տունը ղոնաղ:

Գառնիկը վազիրի տղի հետ գնաց, կերան, խման, քեֆ արե-
ցին: Իրիկվորե մի քիչ անց կացավ, Գառնիկը ասեց.— Հմի էլ
էթանք մեր տուն ղոնաղ:

Վե կացան էկան իրանց տունը: Եկան Գառնիկանց տունը,
Գառնիկը ըտրան լավ պատվեց: Գառնիկի կնիկը կապեց վազիրի
տղին օխտը տարվան գինի, ընենց խմեցին, որ պիանացան, վեր
ընկան գետինը, քնեցին: Տեհավ որ վազիրի տղեն քնած ա, Գառ-

Տնիկի կնիկը գնաց էն խանչալը, որ իրան սրտին ընկած էր, բերեց, վազիրի տղին շեք արեց, խանչալի դաստեն առավ իրա գոշին, ծերը դեմ արեց վազիրի տղի դոշին ու ընկավ վրեն՝ շորս մատ էլ մտավ գետինը: Եղնա ինչդար արին կար՝ սաղ թամուղացրեց, էն շորերի մեջ որ փաթել ին տվել իրան՝ փաթ տվեց վազիրի տղին, մարգին զարթնացրեց, ասեց.— Ա՛յ մարդ, ինձ նա որդեղ որ դրել էր, կտանես էն տեղը կըգնես, եղնա կգաս՝ քեզ կպատմեմ:

Գառնիկը վե կալավ, վազիրի տղին տարավ էն տեղը դրեց. որ իրան կնկանը հանել էր, քարը քաջեց վրեն ու էկավ:

Ասեց.— Ա՛յ մարդ, գիդաս ի՞նչ կա. ես էս քաղաքի թաքավորի ախշիկն եմ, իմ քառասուն քոծերի հետ գնացի ման գալու, վազիրի տղեն ինձ սիրել էր, որ առնի, ես չէի առնում. մանդալածս տեղը, մեկ էլ էն սեհա, շորս ձիավոր էկան, էլ չեմ իմանում, թե ինչ ա ըլե, ինչ չի լե, էն եմ իմանում, որ դու ինձ լավացրել ես:

Առավոտը լիսը բացվում ա, ասում ա.— Գառնի՛կ գնա բազար, երեք հատ ձի առ, երկուսը հեծնելու, մինը բարձելու, երկու ձեռք էլ տղամարդու շոր կառնես, կը գաս տուն:

Գառնիկը գնաց երեք հատ ձի առավ, էրկու ձեռք շոր առավ տղամարդի, էկավ տուն քշերվա կեսին նիլան ձիանը, մի ձին էլ իրանց ապրանքը բարձեցին ու էտ քաղաքիցը դուս էկան: Շատ գնացին, թե՛ քիչ, աստված գիտի. դե՛, թաքավորի ախշիկ էր՝ շատ գնալուց ձիու վրեն բեզարեց, ճամփին մի փոշտ պատահեց, վեր էկան ըտեղ, որ դինջանան էլետ էթան: Թաքավորի ախշիկն ասեց.— Ա՛յ մարդ, ես թաքավորի ախշիկ եմ, ազնիվ ապրած եմ, դու պտի գլուխդ դնես իմ շոքին, բայց ես խնդրում եմ, որ իմ գլուխը դնեմ քու շոքին, մի քիչ դինջանամ, էթանք:

Գառնիկը նստեց, թաքավորի ախշիկը գլուխը դրեց Գառնիկի շոքին, քնեց: Գառնիկը մտածեց իրա մեջ. «Ա՛յ ջանում, էս փողն էլ պրծավ, բա մենք ինչո՞վ ապրենք: Թաքավորի ախշիկը ծոծրավից հանեց ահագին քարը: Հլա յավա՛շ տենամ է՞լ կա»: Թամաշ ըրավ տեհավ օխտը հատ էլ կա: Ուրախացավ, մինը ձեռք վեկալավ, որ թամաշ անի, ձեռք քրտնած էր, խալ ընկավ, ասեց. «Յավաշ դնեմ էս ակուշկեն, թող շորանա, էլի կդնեմ տեղը»: Դրեց ակուշկեն, էն դ՛հից մի ագռավ էկավ տեսավ, հենց իմացավ միս ա, վե կալավ ու թռավ: Գառնիկը թաքավորի ախշկա գլուխը դրեց դեգինը, ագռավի քամակից գնաց: Ագռավը թռավ՝ դա գնաց, հասավ մի գեղի, ագռավը աչքից կորավ: Գառնիկն ասեց. «Ծս էլ տնց էթամ թաքավորի ախշկա էրեսին, էտ փողը պտի աշխատեմ,

նոր էթամ: Գնաց էգ գեղի մեջը ըլավ բազպան, տարեկան եռսուսուն մանեթով:

Խաբարը տանք թաքավորի ախչկանից:

Թաքավորի ախչիկը շատ քնեց, քիչ՝ վեկացավ: Վեկացավ տեհավ՝ մարդը չկա, շատ թամաշ արեց՝ չէկավ, մի օր էլ ճամփօն պահեց՝ էլ չեկավ: Մի օր էլ ասեց. «Յավաշ հլա տենամ, իմ անգին բարերից խո չի՞ տարե»: Թամաշ արեց, տեհավ՝ մինը չկա: Ասեց. «Հէ՛լ դիտի աշխարք, սաղ քոնն էր, էտ խի՞ մեկը վեկալար գնացիր»: Թաքավորի ախչիկը մտածեց, ասեց. «Աշխարք ման գամ իմ մարդի պես մարդ չեմ կանա գտնի, լավն էն ա՛ էթամ մի քաղաք, մի դարիբանոց շինեմ, որ կարենամ գտնեմ իմ մարդին»:

Գնաց ու շինեց: Ինչդար մարդիկ գալիս ին՝ առանցի փողի քնըմ ին ըտեղ, իրենց գլխի էկածը ասըմ ին ու էթըմ: Թող թաքավորի ախչիկը մնա ըտեղ, մենք խաբարը տանք Գառնիկից, թաքավորից ու վաղիրից:

Թաքավորն ասեց.— Վազի՛ր, քու տղենն ու իմ ախչիկը անհայտ կորան, արի էրկաթե տրեխ հաքնենք, պողպատե գավազան վերցնենք, ման գանք, բալի գտնենք:

Թող ըտրանք էթան, խաբարը տանք Գառնիկից:

Գառնիկը իրեք տարի մնաց ըտեղ բազման, թամաշա արեց, տեհավ, որ տասր տարի էլ մնա, իրեք հազար մանեթ չի կարողի, ասեց. «Ես պտի էթամ թաքավորի ախչկանը գտնեմ»: Եկավ ասեց.— Խաղեի՛ն, իմ հաշիվը տու, ես էթըմ եմ:

Ասեց.— Ա՛յ մարթ, ինձանից լավ խաղեին խո՞ չես գտնի, ես էլ քեզանից լավ բաղմանչի չեմ գտնի, ո՛ւր ես էթըմ, հախդ քի՛չ ա՛ շատացնեմ:

Գառնիկն ասեց.— Չէ՛, անպատճառ պտի էթամ, իմ հաշիվը տու:

Խաղեինը բերեց իրեք տարվա վարձ՝ իննըսուն մանեթ տվեց, ասեց.— Դե՛, բարի ճամփա:

Գառնիկը մնաս բարով արեց, դուս եկավ, հլա քուչի դուռը չէր հասել, խաղեինը կանչեց.— Գառնի՛կ, մի՛ էթա, մեր էն բաղի ծառն էլ կտրես, բերես, նոր աստված քու հետ:

Գառնիկը գնաց բաղը, ծառը կտրեց, բերեց տեղավորեց, եղև գնաց ծառի մանդր ճիկերքն էլ թոփ անելու վախտը տեհավ մի ագուավի բուն, որ էտ կտրած ծառից վեր ա ընկե: Գառնիկը էտ բունը վերցրեց, քանդեց, տեհավ որ անգին քարը բնի մեջն ա. ուրախացավ, ո՛ր ուրախացավ: Վեկալավ դրեց ջեբը, էկավ խաղեինի ձեռը պաշեց ու ընկավ ճամփա:

Շատ գնաց, թե՛ քիչ, գնաց մի քաղաքի թուշ էլավ: Հարցրեց.
թե.— Մի տեղ տվեք քնելու:

Ասեցին.— Տիլան տեղ ղարիբանոց կա, գնա ընգեղ քնի:

Գառնիկը գնաց էդ ղարիբանոցը: Նոքարները գնացին թաքավորի ախլանը ասեցին, թե իրեք ղոնաղ է էկե: Նա էլ ասեց.—
Գնացեք իրեքին էլ բերեք:

Նոքարները գնացին բերեցին: Բերեցին, թաքավորի ախլիկն
ասեց.— Ամենքդ ձեր գլխի էկածը ասեք, գնացեք քնեք:

Արժթա թաքավորն ասեց, որ իրա ախլիկը կորել էր, ինքը
ընկել ա ման գալու:

Ծտնա էլ վազիրն ասեց, որ իրա տղեն կորել էր, ինքը ընկել ա
ման գալու:

Թաքավորի ախլիկը իմացավ, որ էն իրա հերն ա, էն էլ իրա
սըպանած տղի հերն ա:

Հետո սկսեց Գառնիկը, ոնց որ էս նաղլը ասել եմ, գլխիցը
չպատմեց էկավ:

Թաքավորի ախլիկը «վա՛ջ» արեց, փաթաթվեց տղի վղովը:

Գառնիկն ասեց.— Թաքավոր, քու ախլիկը սա ա, որ ես
ազատել եմ. վազի՛ր,— քու տղեն էլ ինչ արել էր՝ էն ըքովն էլ գնաց:

Նոր թաքավորն ասեց.— Ծա իմ ախլիկս գտա, Գառնիկն էլ
ըլի քեզ տղա, վեկալենք էթանք մեր երկիրը:

Վեկացան գնացին իրանց երկիրը. օխտը օր, օխտը քշեր հար-
սանիք արեցին, կերան, խման, քեֆ արեցին: Նրանք հասան իրանց
մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Աստծանից իրեք խնձոր ընկավ. մինը՝ ասողին, մինը՝ լսո-
ղին, մինն էլ՝ անկաճ ղնողին:

